ՆԱԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մագիստրատուրայի և մասնագիտական որակավորման բարձրացման վարչության պետ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԱՂԱՎՆԻ ՔՈԼՅԱՆ
Հոգեբանության տեսության և պատմության ամբիոնի հայցորդ

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երեխայի զարգացման գործընթացում հիմնական դերը պատկանում է ծնողներին: Հաստատվել են ծնողների և նրանց երեխաների վարքի տարբեր տիպեր, որոնք հաստատվեցին նաև մեր կողմից կազմակերպված հետազոտության ընթացքում: Ծնողները, ակտիվ դիրք գրավելով երեխայի և ընտանեկան ուսումնահիմնական կոմպլիմենտար միջավայրի ստեղծման նկատմամբ, դրանով իսկ կնպաստեն երեխայի ակտիվ դիրքորոշման զարգացմանը, ինքնազարգացմանը:

Հանգուցային բառեր և արտահայտություններ՝ կրտսեր դպրոցական, հուզական դեպրիվացիա:

Հոգեբանության գիտակարգում երեխայի հոգեկան զարգացման վրա ընտանիքի ազդեցությունը հանգամանալից ուսումնասիրված է: Այդ ուսումնասիրություններում ներկայացված են ընտանիքի դերը երեխայի սոցիալականացման գործում, երեխայի նկատմամբ ծնողների հուզական վերաբերմունքի դերն ու նշանակությունը, ներընտանեկան փոխհարաբերությունների հիմքում ընկած երեխաների տարիքային նորագոյացությունները, ծնողական վերաբերմունքի և խնամքի հոգեբանական հիմքերը, ներընտանեկան դաստիարակության ոճերը և դրանց ազդեցությունը երեխայի հոգեբանական աճի, անձնային որակների ձևավորման վրա, հուզական դեպրիվացիայի, կամ ընդհակառակը, հուզական ավելցուկի ազդեցությունը երեխայի անձի ձևավորման վրա և մի շարք այլ հոգեբանական խնդիրներ:

19–րդ դարավերջին Պ.Ֆ.Լեսգավտը գրեց «Երեխայի ընտանեկան դաստիարակությունը և դրա նշանակությունը» գիրքը, որտեղ ներկայացված էին «դպրոց հաճախող երեխաների հիմնական տեսակները և հնարավորինս բացահայտված էր նրանց բնորոշ դրսևորումների և ընտանեկան պայմանների միջև գոյություն ունեցող կապը» [10, էջ 4]: Կարծում ենք, որ դա երեխայի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման համար ընտանեկան միջավայրի պայմանների նշանակության բացահայտման առաջին փորձն էր: Պ.Ֆ.Լեսգաֆտը առանձնացրել է երեխաների վեց «դպրոցական տեսակները»՝ «երեսպաշտ», «փառամոլ», «բարեսիրտ», «խեղճ–փափուկ», «ճնշված–չար», «ճնշված», «նորմալ տիպ (իդեալական)», և այն միջավայրը, որը նպաստում է այս կամ այն տիպի դաս-

տիարակությանը: «Երեսպաշտ» տեսակի դաստիարակության համար (ըստ Պ.Ֆ.Լեսգաֆտի) բնորոշ է ընտանիքի այն տիպը, որտեղ առկա են «ծնողների սուտը և կեղծավորությունը, ձգտումը հեշտ ապրուստին, հոգատարության բացակայությունը», «փառամոլի» զարգացումը տեղի է ունենում «անընդհատ նյութական խրախուսանքի» ընտանեկան միջավայրում. «բարեսիրտ» տիպը ձևավորվում է «հանգիստ, երեխային սիրող ընտանիքում, որտեղ բացակայում են դաժանությունը և երեխային տրվում են լրիվ ազատություն և ինքնուրույնություն», «խեղճ–փափուկ»–ի զարգացումը տեղի է ունենում «փակ տիպի հիմնարկներում, որտեղ չի խրախուսվում ցանկացած նախաձեռնություն և ինքնուրույնություն», «ճնշված–չար» տիպի դաստիարակությանը նպաստում է ընտանիքի այն տիպը, որտեղ «արգելվում է տրամաբանել, առկա են դաժանությունը և ստիպողականությունը». «ճնշված» տիպը զարգանում է «խեղճ, ոչ կոմպլիմենտար, սիրող և աշխատասեր, բայց զբաղված ծնողների ընտանիքում»: Իր հետազոտություններում Պ.Ֆ.Լեսգաֆտը եկել է այն եզրակացության, որ «երեխայի տիպը իր ապրած պայմանների ուղիղ և անմիջական հետևանքն է»: «Նորմալ» տիպը դաստիարակվում է ընտանիքում, որտեղ խրախուսվում է երեխայի ակտիվությունը և ինքնուրույնությունը, այսինքն՝ «արթուն ժամանակ նա անընդհատ գործուն ակտիվ է» [10, էջ 100]: Հետևաբար, իդեալական երեխայի գլխավոր բնութագրիչը, ըստ Պ.Ֆ.Լեսգաֆտի, նրա ակտիվությունն ու ինքնուրույնությունն են: Ընդ որում, ըստ մեզ, Պ.Ֆ.Լեսգաֆտը այնքան էլ ճիշտ չէ՝ պնդելով միջավայրի ուղիղ և անմիջական ազդեցության մասին: Մասնավորապես, մեր կողմից իրականացված հետազոտությունների ընթացքում ստացվել են տվյալներ այն մասին, որ երեխայի ներքին ակտիվությունը, նրա անահատական պոտենցիալ հնարավորությունները կարող են որոշ չափով փոխհատուցել միջավայրի բացասական ազդեցությունը:

Շատ հոգեբաններ և մանկավարժներ են կարևորում դպրոցի և ընտանիքի համագործակցությունը երեխայի կրթության, դաստիարակության և զարգացման գործում (Շ. Ա. Ամոնաշվիլի, Յա. Ա. Կոմենսկի) [7, 8]:

Կրտսեր դպրոցական տարիքը պահանջում է հատուկ վերաբերմունք նշանակալի մեծահասակների՝ ուսուցիչների և ծնողների կողմից, որոնցից կախված է երեխայի հոգեկան առողջությունը և ճիշտ ներքին դիրքի ձևավորումը: Կրտսեր դպրոցական տարիքի երեխաները բնութագրվում են բարոյական, ինտելեկտուալ, հուզական, ֆիզիկական, գեղագիտական հատկությունների զարգացման շրջանով, որոնք կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման հիմքն են:

Ուսումնական հաստատությունների կրթական միջավայրի ժամանակակից ուսումնասիրություններում աճում է ընտանիքի կրթական միջավայրի նշանակությունը: Աճում է ծնող–երեխա հարաբերությունների, ընտանիքում դաստիարակության մեթոդների և ոճերի, երեխայի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունների զարգացման մեջ ծնողական դերերի և վարքի դերը: Հետազոտողները հաշվի են առնում միջավայրի բոլոր տեսակները, տալիս են դրա բնութագրիչները՝ ելնելով կառուցվածքի չափանիշներից և սուբյեկտների առաջատար գործունեությունից:

Ընտանիքի դաստիարակչական միջավայրի տիպերի առաջին դասակարգումը առաջարկել է Յա.Կորչակը իր «Ինչպես սիրել երեխային» մանկավարժական աշխատանքում: Նա տվել է «դաստիարակող միջավայրի» չորս տի-

պերի՝ «դոգմատիկ», «գաղափարային», «անհոգ պահանջատիրական», «արտաքին փայլի և կարիերայի», բնութագիրը: Ըստ Յա.Կորչակի, դոգմատիկ միջավայրը նպաստում է կախյալ և պասիվ երեխայի ձևավորմանը, գաղափարայինը՝ ազատ և ակտիվ, անհոգ պահանջատիրականը՝ ազատ, բայց պասիվ, կարիերային միջավայրը՝ ակտիվ, բայց կախյալ [6, 7]: Յա.Կորչակի՝ դարասկզբում կատարած բացահայտումներն այսօր էլ արդիական են մանկավարժության համար: Հոգեբանական գիտության մեջ ընտանիքի միջավայրի հիմնախնդրի հետազոտությունը բաց է մնում: Երկար ժամանակ Յա.Կորչակի տեսությունը հոգեբանության մեջ ընտանեկան դաստիարակության ոլորտի ուսումնասիրությունների հիմք էր ծառայում, որն արտացոլում էր «դաստիարակող միջավայրի» բաժանման հիմնական սկզբունքները դաստիարակության մեթոդների և ոճերի, ծնողական վարքի տիպերի, ծնող–երեխա հարաբերությունների բնորոշման համար:

Հիմնվելով վերոնշյալ տեսամեթոդաբանական հենքի վրա՝ մեր կողմից իրականացված հետազոտությունն իրականացվել է երկու հիմնական փուլերով.

- հետազոտել կրտսեր դպրոցական երեխաների ընտանեկան միջավայրը,
- ուսումնասիրել կրտսեր դպրոցական երեխաների անձը և փոխհարաբերությունները դպրոցում:

Առաջին փուլում ուսումնասիրվել են 1–4–րդ դասարանների աշակերտներ, որոնց հետ կիրառվել է Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Ինքնանկար», «Իմ ընտանիք» մեթոդիկաները, Ռենե Ժիլի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան, Տորենսի կրեատիվության ախտորոշման մեթոդիկան, դիտման հեղինակային քարտեր, որտեղ գնահատում է և երեխան, և ուսուցիչը, և ծնողը/: Այս փուլում հետազոտված աշակերտները 210–ն էին, որոնց մոտ բացահայտվեց կրեատիվության և կոնստրուկտիվիզմի բարձր ցուցանիշներ: Հետաքրքրական է այն, որ այս երեխաների մոտ 5 տոկոսը նույն ընտանիքից էին:

Երկրորդ փուլում հետազոտվեցին նշված երեխաների ընտանիքները և ուսուցիչները, պարզելու համար նրանց միջանձնային փոխհարաբերությունները /199 ընտանիք/ /մայրիկ, հայրիկ, քույր, եղբայր, տատիկ, պապիկ/: Կիրառվել է Վ.Վ.Ստոլինի՝ ծնողական վերաբերմունքի թեսթ–հարցարանը, Ռենե Ժիլի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկան, Ռ. Բեռնսի, Ն. Կաուֆմանի «Իմ ընտանիքը», հեղինակային հարցարաններ ընտանեկան կոմպլիմենտար միջավայրի բացահայտման համար /ծնող–երեխա փոխազդեցության կոմպլիմենտար հարաբերությունների ախտորոշման թեսթ: Մենք նկատեցինք այն օրինաչափությունը, որ դասվարը ռեֆերենտ անձ է կրտսեր դպրոցականի կոնստրուկտիվիզմի համար, ուստի և ընտրեցինք արդեն հետազոտված 210 երեխաներին դասավանդող 20 դասվարի:

Արդյունքների գրաֆիկական պատկերը զետեղված է գծապատկեր 1–ում:



Այսպիսով, մեր կողմից անցկացված հետազոտության ընթացքում բացահայտվել է, որ երեխայի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունները կախված են կենսաբանական և սոցիալ–մշակութային բնույթի մի շարք պայմաններից: Հետազոտության ընթացքում կրտսեր դպրոցականի անձնավորության հոգեբանական առանձնահատկությունները դիտարկվել են ընտանեկան կոմպլիմենտար և ոչ կոմպլիմենտար միջավայրում: Զուգահեռ ուսումնասիրվել է նաև կրթական միջավայրը և երեխայի զարգացման մեջ նրա դերը: Բացահայտվել է, որ ընտանեկան կրթական միջավայրն է ձևավորում երեխայի մեջ արժեքների որոշակի համակարգ և վերաբերմունք շրջապատող աշխարհի, իր նկատմամբ՝ կախված կոմպլիմենտար կամ ոչ կոմպլիմենտար /խոսքը նյութականի մասին չէ/ լինելու հանգամանքից: Ընտանեկան հարաբերությունների համակարգում արտացոլվում են ժամանակակից հասարակության բոլոր հիմնախնդիրները՝ իրենց կնիքը դնելով ընտանեկան դաստիարակության գործընթացի վրա: Զուգահեռաբար անց է կացվել ընտանիքների մենագրական ուսումնասիրություն, որի արդյունքները ներառվել են հետազոտության փորձարարական բազայի մեջ: Ստացված տվյալների վերլուծության արդյունքները թույլ են տալիս ենթադրություն անել ընտանեկան միջավայրի որոշակի կառուցվածքի առկայության մասին: Բացահայտվել է, որ այն ընտանիքներում, որտեղ առկա է ընտանեկան միջավայրի և դպրոցի փոխլրացնող միասնությունը, երեխաները առավել հաջողակ են ուսման մեջ:

Ընտանեկան և դպրոցական կրթական միջավայրում երեխաների տիպերի բացահայտման նպատակով անցկացվել է գործոնային վերլուծություն: Ստացվել են 8 գործոններ, որոնց միջոցով կարելի է բնութագրել երեխաների հետազոտված խմբերը:

1–ին գործոն՝ «Ինտելեկտուալ զարգացած երեխաներ»: 12 % Բնութագիրը՝ ունեն լավ ինտելեկտուալ ընդունակություններ, հետաքրքրասեր են և շփվող, ուսուցչի հետ փոխհամաձայնության են գալիս, բարձր են ինտելեկտի վերբալ և լաբիլ ընդունակությունները, զարգացած է դպրոցական մոտիվացիան, դրական վերաբերմունք կա հոր և մոր, տատիկի և պապիկի, եղբայրների և քույրերի նկատմամբ: Նրանք լիդերներ են, կարողանում են հարաբերություններ կառուցել հասակակիցների հետ, սոցիալական շրջապատում համարժեք վարք են դրսևորում:

2–րդ գործոն՝ «Ծնողների հետ հարաբերություններում կոնֆորմ երեխաներ»: Այս խմբի մեջ ներգրավվել են այն երեխաները, որոնց ծնողներն «ընդունում են» իրենց որպես անհաջողակների: Բնութագիրը՝ նյութական ձեռքբերումների բարձր մակարդակ, որն արտացոլվում է ցանկություններում, շփվող են, հետաքրքրասեր, եսասեր: Հասակակիցների հետ շփման մեջ առաջանում են սոցիալական համարժեք վարքի դժվարություններ:

3–րդ գործոն՝ «Ինտելեկտուալ զարգացած, բայց ոչ սոցիալականացված երեխաներ»: Հաստատված է, որ այս երեխաներն ունեն ինտելեկտի բարձր ընդհանուր ընդունակություններ, տարբերվում են լաբիլությամբ, ինտելեկտի մաթեմատիկական, վերբալ ընդունակություններով, բայց դրա հետ մեկտեղ նրանք շփվող չեն և չեն գերիշխում հասակակիցների շրջանում, դպրոցական մոտիվացիան ցածր է: Նման երեխաների շրջանում խանգարված է վարքի սոցիալական համարժեքությունը կրթական միջավայրում:

4–րդ գործոն՝ «Բարձր իմացական ակտիվությամբ երեխաներ»: Այս խմբի մեջ են մտնում գիտելիքների, ունակությունների, հմտությունների ձեռքբերման բարձր

ձգտումով երեխաները, որոնք աչքի են ընկնում ուսուցչի նկատմամբ դրական վերաբերմունքով: Ծնողները ստեղծում են իրենց երեխաների սոցիալապես ցանկալի վարքի պատկերը, դաստիարակությամբ հիմնականում զբաղվում է մայրը, դրա մասին խոսում է «մոր նկատմամբ վերաբերմունքի» բարձր ցուցանիշը:

5–րդ գործոն՝ «Ուսուցման մոտիվացիայով երեխաներ»: Բնութագիրը՝ բարձր դպրոցական մոտիվացիա, բայց լավ առաջադիմությամբ ավելի շատ հետաքրքրված են ծնողները: Նրանք դրսևորում են երեխաների նկատմամբ գերխնամք, վերահսկում են նրանց վարքը դպրոցում, ինչը արտացոլվում է երեխաների օրինակելի վարքում:

6–րդ գործոն՝ «Երևակայության և ֆանտազիայի բարձր մակարդակով երեխաներ»: Տվյալ գործոնի մեջ են մտել այն երեխաները, որոնք մոր խիստ գերխնամքի տակ են, ինչն արտացոլվում է սիմբիոզում և «Փոքրիկ անհաջողակ» ցուցանիշում: Այս երեխաները բնութագրվում են մտածողության յուրօրինակությամբ, բայց բացակայում է մտածողության ճկունությունը, որը հանգեցնում է նրան, որ ֆանտազիայի բնույթի ցանկությունները չեն դրսևորվում: Այս խմբի երեխաների համար կարևոր է հոր հեղինակությունը:

7–րդ գործոն՝ «Սիբլինգներին կապված երեխաներ»: Այս խմբում են ցանկությունների բարձր ցուցանիշով երեխաները, որոնք կապված են մոտիկ շրջապատի հետ («մայրիկը առողջացել է», «որպեսզի մայրիկի ոտքերը և ձեռքերը չցավեն»): Ընդ որում գրանցվել է մոր նկատմամբ վերաբերմունքի բարձր և հոր նկատմամբ՝ ցածր ցուցանիշ: Տվյալ ընտանիքում հայրը կամ բացակայում է, կամ չի հետաքրքրվում երեխաների դաստիարակությամբ: Բացակայում են ֆանտազիայի բնույթի ցանկությունները, ցածր է վերաբերմունքը ընկերոջ կամ ընկերուհու նկատմամբ:

8–րդ գործոն՝ «Անվստահ երեխաներ»: Բնութագիր՝ ինտելեկտի մաթեմատիկական լավ ընդունակություններ, բացակայում են լայն այլասիրական բնույթի ցանկությունները, բայց դրսևորվում է ծնողների կողմից անհաջողակի գնահատականը, որը հանգեցնում է սիմբիոզի խանգարմանը:

Այսպիսով, ընտանիքի և դպրոցի միջավայրերի ազդեցությունների հարաբերակցության ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց ծնողների և երեխաների դիրքորոշումների փոխկապվածությունը, ընտանիքի և հիմնարկի կրթական միջավայրի կոմպլիմենտար միասնության առկայությունը, որը շրջապատի միջավայրի հարաբերությունների պայմաններից մեկն է:

Հոդվածի ներկայացման պարերթիվը՝ 12. 01.2013 թ.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Чудновский В. Э.** Становление личности и проблема смысла жизни: Избранные труды / В.Э. Чудновский. – М., Издательство Московского психолого–социального института ; Воронеж: Издательство НПО «Модэк», 2006, с. 707–708.
2. **Шадриков В. Д.** Философия образования и образовательные политики. – М., 1993, с. 27.
3. **Шадриков В. Д.** Готовность детей к обучению. Деятельность и способности. – М., 1994. с. 133–147.
4. **Шапатина О. В.** Согласование родительской позиции как условие личностного развития ребенка: Дис… канд. психол. наук . – М., 2001.
5. **Шнейдер Л. Б.** Семейная психология : учебное пособие для бузов. 2–е изд. – М; Академический проект, Екатеринбург: Деловая книга, 2006.

6. **Ясвин В. А.** Образовательная среда: от моделирования к проектированию. – М., Смысл, 2001.
7. **Ackerman N.** The Psychodynamics of family life. NEW YORK, Basic Books, 1958.
8. **Baumrind D.** The contributions of the family to the development of competence in children // Schizophrenia Bulletin, 1975.
9. **Koch–Hillerbrecht, Manfrend.** Kleine Personlichkeitspsychoiogie/ Von Prof.Dr. Manfred Koch–Hillerbrecht . Stuttgart: Verl. Fur Angew Psychologie, cop. 1982.
10. **Miller, Alike.** The drama of being a child: A the search for the true self / Alice Miller, Transl. by Ruth Ward, London: Viago press, 1991 – XVI, 154 c.

ФАКТОРНЫЙ АНАЛИЗ ВЛИЯНИЯ ВНУТРЕННЕЙ СТРУКТУРЫ ОБРАЗОВАТЕЛЬНОЙ СРЕДЫ СЕМЬИ НА ФОРМИРОВАНИЕ ПСИХОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТЕЙ МЛАДШЕГО ШКОЛЬНИКА

АКОПЯН НАИРА

Руководитель управления магистратуры повышения профессиональной квалификации и межвузовского сотрудничества Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна, доктор психологических наук, професор

КОЛЯН АГАВНИ

Соискатель кафедры теории и истории психологии Армянского государственного педагогического университета им. Хачатура Абовяна

В статье представлен факторный анализ внутренней структуры комплиментарной среды семьи, на основе которого выделена типология обследованных младших школьников по содержательным социально– психологическим особенностям.

Дата представления статьи: 12.01.2013г.

FACTORIAL ANALYSIS OF INNER STRUCTURE OF FAMILY AND EDUCATIONAL ENVIRONMENT IN THE FORMATION OF INDIVIDUAL'S PSYCHOLOGICAL CHARACTERISTICS OF JUNIOR SCHOOLCHILD

NAIRA HAKOBYAN

Head of the Department of Master's Degree and Professional Qualification Improvement, Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan, Doctor of Psychological Sciences, Professor

AGHAVNI KOLYAN

Applicant of the Chair of Psychology Theory and History, ASPU after Khachatur Abovyan

The article summarizes the factorial analysis of inner structure of family cooperation environment on the basis of which typology of surveyed junior schoolchild is separated. As well as the social psychological characteristics of the above mentioned typology is given.

Article submission date 12.01.2013